

ՆԱԽԱԿ ԱՍՏՐԱԽԱՆՈՒՄ

Ամենին յայտնի է՝ որ մեր ազգայինները այլ և այլ տեղերում զանազան ազգագույն գործերի ձեռնամուխ են լինում։ այս ազգային գործիչները օտար քաղաքներում գտնում են իւրեանց համար մի մի հաւատարիմ՝ անձրն, որոց ձեռքով, եթէ այդ գործը մի ազգային շինութիւն է, հանգանակութիւն են անում յօգուտ նորա եթէ եկեղ. ստացւածքից փիճակախաղ է՝ խաղատումսակներն են բաժանում, եթէ այդ գործը մի որ և իցէ հեղինակի երկասիրութիւն հրատարակելու մասին է՝ ստորագրութիւն են բացանում, և այլն, Հատ անգամ պատահում է՝ որ այդ գործող անձինքը յիրաւի իւրեանց նպատակը ունին միայն ազգին օգուտ տալ, հիմնւած ազգասիրական եռանդի վերայ՝ ազնւութեամբ են վերջացնում իւրեանց գործը։ Այլև ոչ սակաւ պատահում է, որ այդ գործող անձինքը իւրեանց անհեռատես ընթացքով թիւր ուղղութիւն են տալիս գործին, որով թէ իւրեանք և թէ իւրեանց օտարաքաղաքացի հաւատարիմ կարծած անձինքը անհաւատարիմ են հանդիսանում ամբողջ մարդկութեան առաջը։ առաջինների օրինակը շատ ունին, բայց անպակաս են և վերջինները։ 1877 թուին յուլիսի 11 ին Խրիմու Բաղէսարայի Աերափոխման սուրբ Աստուածամայր եկեղեցւոյ Երեցփոխան Մարտիրոս Պոյնաճեանցից նամակ ստացայ՝ որ եկեղեցւոյատեան տան և երկու կտոր արծաթեղէններ վիճակախաղ է ձգում յօգուտ եկեղեցւոյ, որով և խնդրում էր իմ մասնակցութիւնը այս ազգային գործին, իւր այս նամակով ինձ ուղարկած 50 հատ տոմսակ բաժանելով, Ես ամենայն ուրախութեամբ յանձն առայ մի այսպիսի թեթեւ ծառայութիւն ցոյց տալ եկեղեցւոյն՝ և սկսեցի բաժանել այդ տոմսակները, բայց մեծ դժուարութեամբ հաղիւ 49 հատ բաժանեցի և գները 40 րուբլի՝ մնացած 10 տոմսակների հետ պահեցի ինձ մօտ այն դիտաւորութեամբ միայն, որ երբ կսկսին խաղ անել՝ այն ժամանակը կուղարկեմ, բայց վերոյիշեալ Պարոն Երեցփոխանը 24 ին փետրւարի 1879 թուին նորից ինձ մի նամակ է գրում՝ յայտնելով՝ որ վիճակախաղութեան ուշադրաւ մասին շատ նեղութիւններ է կրում այլազգի տոմսակատուներից, որ իւր իւր 27 ամեայ երեցփոխանութեան ընթացքում ամենեին չէր տեսած, և խնդրում էր ինձ մօտ եղած տոմսակների գները ուղարկեմ իրեն, որովհետեւ վիճակախաղի յետաձգութեան պատճառը իւր ես եմ, առելով՝ «Այդ տոմսակներուն փողերն մինչև այժմ բռնած էք, չէք զրկել, աստանովկան ձեզանից է, շուտով պատասխանիդ կտպասեմ»։ Սոյն նամակի հետ ուղարկում է ինձ Պետերբուրգի Գէորգ քահանայ Խանութեանի իսկական նամակը իրեն գրած 1879 թիւ Փետրւարի 14 ին, որի մէջ վերոյիշեալ բարեկրօն Հայրը գրում է նորան այսպէս։ «Այս տեղի տոմսակ տոնողները անհամբեր կտպասեն, առաւել ևս ես, որ ըստ մասին պատասխանատու եմ։ Միւսանգամ եթէ այդպիսի գործ պատահելու լինի՝ չդիտի կարողանամ առաջարկելու, հաւատարմութիւնս կոր»։ «ցրած լինելուս պատճառաւ»։ Մինչ այս մինչ այն՝ այս գործին վերաբերեալ մի ուրիշ նամակ ստացայ Արմֆելսպոլի և Բաղէսարայի Հայոց եկեղեցեաց գործակալ Բարեկրօն Օգոննախոս քահանայէն Վոպչակճեանց 1879 թուի Մարտի 6 ին գրած, որի մէջ ինքը պատասխանատու հանդիսանալով այս գործին՝ այսպէս է գրում։ «Ըստ ծանուցադրութեան Երեցփոխի Բաղէսարայի Հայոց Աերափոխման սուրբ Աստուածածին եկեղեցւոյ յամօց անտի գտանի առաքեալ առ քիղ յիսուն տոմսակք յօգուտ նոյն եկեղեցւոյ կարգեալ վիճակախաղի յաղագս բաշխելոյ զոյնս առ ցանկացողս։ Արովհետեւ բազում ժամանակք են, որք անցին, այս և այն պատճառանօք յետաձգելով ղկատարած, որոյ տոթիւ ծագեալ տեսանի ոչ սակաւ դանդաղանաւ, այր սակաւ պարտաւորեալ եղաք հրապարակաւ

« ծանուցանել ի նաճանգական տեղադրի զօրէ խաղարկութեանս այն է ի
 « 25 Ապրիլ ամսոյ տարւոյս զօրմէ ծանուցանելով և 2եղ խոխորհարար
 « խնդրեմ՝ աներկմիտ հոգւով փութմասցիք առաքել զգինս տոմսակաց, ո-
 « թոյ փսն յանձնառեալ եմ լինել երաշխաւորս և յետ խաղարկութեան
 « հրատարակել զփաստակեալ համարս վիճակախաղի ի լրագիրս Հայոց և
 « Պօստաց ցուցանելով ի նոսին առ 8 դիմելն յաղապս ստանալոյ զխաղար-
 « կեալ իրս » ։ Այս նամակը ստանալուց յետոյ ես Ապրիլի 6 ին վերոյի-
 « շեալ քառասուն րուբլին տասն հատ անբաժան մնացած տոմսակներն հետ
 « ի միասին ուղարկեցի փոշտայով րուբլիոն Օգսենտիոս Հօրը ըստ իւր
 « պահանջմանս որից պատասխան եմ՝ ստանում 1879 թուականի Ապրիլի
 « 19-ին նամակով, որի մէջ այսպէս է գրում ։ « Ի 17 ամսոյս ժամանեաց
 « առիս գրութիւն 2եր . . . հանդերձ 40 րուբլիօք յագուտ Բաղէնտարայի
 « Հայոց եկեղեցւոյ կարգեալ վիճակախաղական տոմսակով, յղեալն ի
 « 2էնջ ի 6 ն Ապրիլի տարւոյս որ ունի մեալ առիս ընդ պահեստիք՝
 « մինչ ցտարուում և յայլոց քաղաքաց զգինս բաժանեալ տոմսակաց,
 « Զօրէ խաղարկութեան (յուսամ յաջողեցի փութով) ծանուցից ան-
 « շուշտ ձեղ . . . առանձին գրութեամբ ի գիտութիւնս Ընդ այս թիւ հա-
 « մար 109- ծանուցեալ եղև նաև Պարոն Երեցփոխ Մարտիրոս Պոյաճեա-
 « նին փսն ինև ստացեալն ի 2էնջ 40 րուբլի արծ. ի տեղեկութիւնս ։
 « 2ստանալով ոչ Երեցփոխանից և ոչ Օգսենտիոս քահանայէն բաւարար
 « պատասխան վիճակախաղութեան մասին, զարձեալ գրեցի յիշեալ քահա-
 « նային 21-ին Դեկտեմբերի 1879 թուականին. նա այս նամակիս գրում է
 « պատասխան 27 ին Յունվարի 1880 ամի այսպէս, « Ներեցէք 2եր 21-ն
 « Դեկտեմբերի անցելոյ ամի նամակի պատասխանն ցարգ յետաձգելուս
 « « պատճառն չէ այլ ինչ, եթէ ոչ Երեցփոխանի յամառութիւնը. ոչ գրած
 « նամակներուս պատասխանը կատանամ իրմէ՝ և ոչ ալ կրցայ ցարգ հա-
 « ռատի տեղեկանալ զօրէ խաղարկութեան վիճակախաղի տոմսակաց, որ
 « ցարգ մնացած է անկատարս ալ չըստասելով անոր պատասխանին՝ կիտ-
 « թամ Հայրութեանդ աղնիւ սիրտը միամտացնել, 2եղանից ստացած 40
 « րուբլի տոմսակաց գներու մասին, թեպէտ և խաղելով Երեցփոխի
 « խոստմանը ես այդ գումարը ի զօրձ գրած եմ՝ նոյն եկեղեցւոյ խաչկալի
 « վերայ նոյն իսկ իւր ձեռքով, բայց այսու ամենայնիւ ես յանձնառու
 « կլլամ պատասխանատու լինել այդ գումարի մասին, երբ և է թէ չխա-
 « ղացելի հարկաւ բողոքաւորք պէտքէ շատանան անշուշտ և ըստ վեճ-
 « ույ իշխանութեան պէտքէ ընտրի կամ խաղալ կամ փողերն ետ դարձ-
 « նել, յայնժամ այս 40 արծաթի պատասխանատուութիւնը ինչպէս յանձն
 « առած եմ՝ այնպէս ալ անտրտունջ կպարտաւորեմ հասուցանել առ
 « 2եղ, կաղաչեմ միամիտ կացէք և միամտացրէք անոնց ևս որոնք գր-
 « նած են այդ տոմսակներից, որ նոյն փողը չէ մաքնեալ ի կորուստս ե-
 « թէ մինչև Ապրիլ ամիս չհրատարակի տեղոյս նաճանգական լրագրի
 « մէջ, զօրէ խաղարկութեան և զայն թերթը չհասցնեմ 2եր ձեռքը մինչ
 « ց Զատիկի յայնժամ չէր ինչ փաստ բողոք բառնալն 2եր առ Հոգեւոր
 « իշխանութիւնն վիճակիս որպէս զի այնու մէկ վերջ մը տրուի գործինս
 « ես այս անգամ ևս Հայր Օգսենտիոսի խօսքը յարգելով սպասեցի մինչև
 « Ապրիլ ամիսը, անցաւ Ապրիլ, եկան Մայիս և Յունիս ամիսները, բայց
 « ոչինչ բաւարար տեղեկութիւն չստացայ, այն ժամանակ զօրձ գրեցի րու-
 « բլիոն քահանայի ցոյց տուած միջոցը, այն է՝ յայտարարութեամբ 26 ին
 « Յուլիսի 1880 թուականի համար 60 դիմեցի նոյն վիճակի Աստուծոյ գե-
 « րապատիւ Մակար Արքեպիսկոպոսին և իմ գրեցի ամենախոնարհարար
 « քաղցր ուշադրութիւնը և տնօրէնութիւնը վերաբերեալ այս գործինս, նո-
 « րին բարձր սրբազնութիւնը չմերժելով իմ խնդիրս, իմ յայտարարու-
 « թիւնս մակագրութեամբ յանձնում է ի տնօրէնութիւն Ալեքանդրին Ան-
 « սիստորիային նոր նախիջևանու և Բեսարաբիոյ, Աերոյիշեալ Աննիստո-

ընդհանուր զորութեամբ ի 18-ն Դեկտեմբերի 1880 Ք 2431 ստացալ Օգսեն-
 տիոս քաջանայի և Պոյաճեան Երեցփոխանի իսկական նամակները որոն-
 ցից երեւցաւ որ Սոսիստորիայն պահանջել է Սոսիստորիայն քաջանային
 որ կամ նա փութացնէ վիճակահանութիւնը և կամ վերադարձնէ ին-
 նից ստացած 40 մանէթը, բայց Օգսենտիոս հայրը երեկ մտապահ լինե-
 լով իւր առիտ ուղղած նամակների բովանդակութիւնը և կամ կար-
 ծելով որ ես պահած չեմ ունենալ իւր նամակները՝ այսպիսի յայ-
 տարարութիւն է գրում Սոսիստորիային. «Արդարեւ յիշեալ բարեկրօն
 «քաջանայն ըստ իմոյ գրութեան առաքեալ առիտ զգինս 40 հաւ փիճա-
 «կախողական տոմսակաց զ40 բուրլիս արծաթի վերաբերեալն յօգուտ
 «Բաղաստարայի Հայոց եկեղեցւոյն, բայց ոչ ի պահպանութիւն, այլ որ-
 «պէս գրեալ է ի նամակին վասն հասուցանելոյ ըստ պատկանելումն :
 «Որ սակս պարտաւորեալ եղէ յանձնել զայն գումար Երեսփոխանի նոյն
 «եկեղեցւոյ. . . . Սա այսպէս է գրում Սոսիստորիային, մինչդեռ իւր
 «1879 ամի Ապրիլի 19-ին ինձ գրած նամակումը ասում է, զորս ունի
 «մեալ առիտ ընդ պահեստիք մինչ ցատացումն և յայոց քաղաքաց զգինս
 «բաժանեալ տոմսակաց» որով ինքը իւր յայտարարութեան միջի այս
 «խօսքը հերքում է՝ թէ «բայց ոչ ի պահպանութիւն» և ապա «յոյր
 «սակս պարտաւորեալ եղէ յանձնել զայն գումար Երեսփոխանին նոյն ե-
 «կեղեցւոյ» մինչդեռ նամակի մէջ գրում է՝ թէ Երեսփոխանին միայն տե-
 «ղեկութիւն է տուել և ոչ թէ փողն է յանձնել, աւելով՝ «ընդ այս թիւ
 «համարաւ 109 ծանուցեալ եղև նաև Երեցփոխան Մարտին Պոյաճեանին
 «վասն ինև ստացեալ ի 2էնջ 40 բուրլի արծաթի ի տեղեկութիւն :
 «Դարձեալ նոյն յայտարարութեան մէջ այսպէս է ասում. «վիճակահա-
 «նութիւնն ըստ բանաւոր և գրաւոր խոստման Երեսփոխանի եկեղեցւոյն
 «պարտ է լինել աշուշտ, իսկ ի հակառակ դէպս Երեսփոխան այն պարտա-
 «ւորի ըստ իմ կարծեաց վերադարձուցանել ոչ միայն զ40 բուրլիս, զոր
 «ընկալեալ է ինև զառաքեալն ի Բունեաթեանց բարեկրօն Աւագ քաջա-
 «նային Աստրախանայ, այլ նաև աւելի քան զմի հազար բուրլիս արծ-
 «զորս ստացեալ է ի զանազան քաղաքաց և յանձանց յանուն վիճակա-
 «խաղութեան : Իւր յայտարարութեան վերադարձալ խօսքերն ևս հերք-
 «վում են 1880 թու Յունվարի 27 ին ինձ գրած նամակով, որ ասում է.
 «բայց այսու ամենայնիւ ես յանձնառու կլլամ պատասխանատու լինել
 «այդ գումարի մասին» և զարձեալ «ըստ վճռոյ իշխանութեան պէտք
 «է ընտրուի այսինքն կամ խաղալ կամ փողերն վերադարձնել, յայն-
 «ժամ այս 40 մանէթի պատասխանատուութիւնը ինչպէս յանձն առած
 «եմ՝ այնպէս ալ անարտուծ կպարտաւորիմ հասուցանել առ 2երդ Ար-
 «ժանապատուութիւն, կազալեմ միամիտ կացէք և միամտացրէք անոնց
 «ևս՝ որոնք գնած են այդ տոմսակներից, որ նոցա փողը չէ մատուած ի
 «հորուստ» Արեմն ընթերցողները կարող են դատել Երեսփոխան Պոյա-
 «ճեանի և Օգսենտիոս քաջանայի զորքը, որի մէջ երկու լեզու են բանեց-
 «նում անվայել մարդկութեան արժանաւորութեանը, որով ի տես է ել-
 «նում իրենց գործի խարդախութիւնը, որին ապացոյց կարող եմ բերել
 Օգսենտիոս հօր համապատիւ ընկերոջ Պոյաճեան Երեսփոխանի խօսքերը
 որ ուղղած է առ Օգսենտիոսն Հայրը բոլորովին իւր իսկ բառերով. «Ե-
 «ղէ մուտլախ թող խաղասնէ այս միտութիւն ամենևին ճամբայ չը-
 «կայ, զէրէն ժողովուած բողերն ամենքն խարճվեցաւ մատաղատունին
 «վրան և խաղացվելու բաները որ ալայը 12 կտոր պէտք է ըլա ունիմ ընդ
 «ամէրը չորս կտորները մնացեալներն ալ պէտք է գնեմ այն ստացելու
 «բողերովն : Զարմանալի հանճար, փողերը ի՞նչ բանի մասին են ժո-
 «ղովում և ինչի՞ են գործ դնում, վիճակախաղ ձգելու իրեղէնները ծա-
 «խում են, և նորա փողը այլ բանի են գործ դնում, իսկ այժմ որպէս զի
 «մի առժամանակ ևս մեզ լսեցնեն, նորից երկրորդ լեզուներն են բանաց-

նում ասելով « մնացեալներն ալ պէտքէ զնեմ այն ստացելու քո-
 « զերոջն » : Աստուած յաջողութիւն տուց՝ որ երեք տարիից կարողանաք
 զնեւ : Գարձեալ այսպիսի աղնիւ ձեռնարկութիւն արած է նաեւ Ախլ-
 ցիայի հոշակաւոր Եղիշէ վարժապետը Մեծատունեանց 1878 թուին
 իւր Հայերէն լեզուի աշխարհաբառ խօսակցութեամբ « ինքնուսոյց
 « Քերականութիւն » յօրինած ժամանակը : Այս պարտնք ի ձեռն Ախալցխայ
 Հայ-կաթողիկոսց Աերափոխման Ս. Աստուածածնի եկեղեցւոյ վերակացու-
 քահանայի Շահինեանց ինդրում է ինձ՝ որ ես ստորագրութիւն բանամ :
 ես ըստ իմ սովորութեան ընդունեցի սիրով այս աստճարկութիւնը և հաղիւ
 կարողացայ 15 անձանց ստորագրել տալ : որ այս սակաւութեան պատ-
 ճառը ի հարկէ Աստրախանու հայ բնակչաց անընթերցասիրութիւնն է : և
 բաժանորդական լիբրթը հանգերձ ետին բուրլի յիսուն կոպէկ բաժանոր-
 դագնով ուղարկեցի Մեծատունեանցին : Այս պարտնէն ես երկար ժամանակ
 պատասխան չստացայ : գրեցի զարձեալ և կամեցայ յետաձգութեան
 պատճառը իմանալ : նա 1878 թուին զեկտեմբերի 23 ին պատասխանում
 է այսպէս : « Զբաժանորդակիս օրինակացն այնոցիկ 7 բուրլի (բացա-
 « ռութեամբ փօստայի ծախուց) զոր ստացեալ էի կանխաւ : յայնժամ
 « վերադարձուցանի յինէն առ 2 լեզ ի հատուցանել մեծարգոյ բաժանոր-
 « դաց : յորժամ զերկասիրութիւնն մեր շիցէ ի լըյս ելանել թէ և այսչափ
 « յետաձգուեցաւ և գուցէ յամեսցէ այլ ևս ամիսս երկուս կամ երիս : »
 Պարտնի երկու ամսուայ վրայ անցաւ ամբողջ երկու տարի : սակայն ամե-
 նինն տեղեկութիւն չունիմ : բայց շատ կարելի է պարտն Մեծատունեանցը
 ամիս ասելով տարի է հասկանում : և եթէ յիրաւի այդպէս է : պէտք է որ
 մի տարի էլ սղասեմ : որովհետեւ ասում է « և գուցէ յամեսցէ այլ ևս
 « ամիսս երկուս կամ երիս : » Ի հարկէ այս իրողութիւնները շատ ցաւալի
 են : ցաւալի են ասում եմ : ոչ թէ նորա համար՝ որ այլոց փողերն են
 մէջ տեղը կորչում : ոչ : այլ նորա համար՝ որ իւրեանց գործող անձինք-
 ները անհաւատարիմ են երևում մարդկութեան առաջ : և որ առաւել
 ողբալին է : այսպիսի դէպքերը պատճառ են լինում ժողովրդեան դէպ ի
 այսպիսի ձեռնարկութիւնները ունեցած եռանդը հանգնելու : որով եթէ
 մի ուրիշ անգամ հարկ լինի մի այսպիսի գործ սկսել : այն ժամանակ բո-
 լորը հեռանում են ասելով : « մենք աւելորդ փող չունենք այսպիսի ան-
 « աղնիւ հոգւոյ տէր մարդկանց տալու » և իրաւացի է ժողովրդեան այս
 խօսքերը : որ բացայայտ կերպով ցոյց են տալիս անսուտ սառնութիւն
 դէպ ի ազգային գործերը : և այս՝ շնորհիւ Պոյաձեանի նման երեսփոխան-
 ների : քահանայ Օգսենիանոսների և Մեծատունեանի նման պարտնի սո-
 ցա կարգին է պատկանում և երիտասարդ Յովնաթանեանցը : որ մի ժամա-
 նակ ծառայում էր Ս. Էջմիածնի Սինոդում : չգիտեմ : քանի տարի յա-
 ռաջ՝ մի հրատարակութեան ձեռնարկութեամբ դումար ժողովեց : բայց
 մինչև այսօրս ոչ մի տեղեկութիւն չստացուեցաւ նորա հրատարակու-
 թեանց համար : Յաւալի՝ են յիրաւի այս դէպքերը և անպատճառ փո-
 ռային : --

Յովսէփ Ա. ագ. Բահանայ Բանիւթեանց.

ՀԱՇԻԵՑՈՒՅԱԿ ԱՄԵՆԱՏԵՍԱԿ ՆԱԽՈՒՑ ԵՒՆՈՒԹԵԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՑ

ՀԱՅՈՑ ՇԱՄԱԽՈՒՑ.

Եկեղեցին մինչև յատուկապիժը Քանդելու : Ետն ու հոգն առանձին տ-
 առանձին հաւարելու համար մշակաց տուաւ :
 Փայտեայ շինութիւնները : ժեշտեայ Ծածկոցը վեր տանելու : դռներն ու
 լուսամուտները քանդելու եւ ապահով տեղ դնելու համար հիւսան
 վարձ տուաւ :

359 90

33 46